ԱՐՍԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՖԱԹԻՄՅԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ ԲԱԴՐ ԱԼ-ԳԱՄԱԼԻԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայերը Եգիպտոսի հետ առնչություններ են ունեցել պատմական վաղ շրջանից ի վեր, ինչն էական նշանակություն է ձեռք բերել Եգիպտոսի բյուզանդական և ապա՝ արաբական տիրապետության շրջանում[1]: Սակայն հայերի հոսքը Եգիպտոս մեծ թափ է ստացել Ֆաթիմյանների /969-1171/ օրոք, մասնավորապես հայ վազիրների կառավարման շրջանում /1074-1162/, երբ վերջիններս արտոնել և շատ դյուրություններ են ստեղծել Եգիպտոսում իրենց հայրենակիցների հաստատման համար:

Եգիպտոսի Ֆաթիմյան շրջանի հայ գաղութի մասին որոշակի, բայց և կցկտուր տեղեկություններ են հաղորդում հիմնականում արաբական աղբյուրները, որոնք մեծ մասամբ անդրադառնում են Ֆաթիմյան հայազգի վազիրներին: Վերջիններիս դերակատարումն այնքան մեծ է եղել, որ ֆրանսիացի պատմաբան Գ. Վիքը Եգիպտոսի պատմության տվյալ փուլն անվանել է «հայկական շրջան»[2]: Եգիպտոսի ռազմական, քաղաքական և վարչական փաստացի ղեկավարությունը 11-12-րդ դարերում գրեթե ամբողջովին գտնվել է նրանց ձեռքում: Այդ իմաստով Եգիպտոսի հայ գաղութի պատմությունը շատ դեպքերում կապված է վերջիններիս գործունեության հետ:

Եգիպտոսի հայ գաղութի, ինչպես նաև Եգիպտոսի կառավարման համակարգում մեծ դերակատարություն ունեցող հայերի գործունեության մասին արժեքավոր տեղեկություններ է պարունակում 15-րդ դարի պատմիչ Տակի Ադ-Դին Ալ-Մաքրիզիի «Գիրք հորդորանքի և խորհրդածության՝ նոր վայրերի և հնությունների հիշատակության մասին» /«Քիթաբ ալ-մաուաիզ վա ալ-իթիբար ֆի զիքր ալ-խիտատ վա ալ-ասար»/ աշխատությունը, որը հայտնի է նաև «Ալ-Խիտատ» /կամ «Խիտատ Ալ-Մաքրիզի»/ անվամբ[3]: Հայ վազիրների և որոշ չափով եգիպտահայ գաղութին է անդրադառնում 13-րդ դարի պատմիչ Իբն Մույասսարը[4]: Միջնադարյան Եգիպտոսի քրիստոնյա եկեղեցիների և համայնք-

---

[1] Մանրամասն տե՛ս՝ Seta B.Dadoyan, The Fatimid Armenians Cultural and Political Interaction in the Near East, Brill, 1997, 214 p.

[2] Տե՛ս Gaston Viet, Precis de l'historie d'Egypte, Le Caire, 1932.

[3] Գէորգ Մըսրլեան, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, քաղուած Մաքրիզիէ եւ այլ նշանաւոր պատմագիրներէ, Գահիրէ, 1935:

[4] Տե՛ս Ibn Muyassar, Annales d'Egypt /Les Khalifes Fatimides/, text Arabe, e'dite' par M.Henri Masse', Le Caire, 1919.

ների վերաբերյալ բացառիկ կարևոր աղբյուր է հայազգի պատմիչ Աբու Սալիհ Ալ-Արմանիի կամ Ապուսահլ Հայի /12-13-րդ դդ./ աշխատությունը: Եգիպտոսում քրիստոնյա այլ համայնքների կողքին վերջինս մեծ տեղ է հատկացրել հայ եկեղեցուն և համայնքին: Նա թվարկում է հայկական եկեղեցիների անունները, նշում վայրերը, տալիս է բազմաթիվ տեղեկություններ հայոց պատրիարքի և հայազգի վեզիրների, հայկական գաղութի և հայ-արաբական հարաբերությունների մասին[5]:

13-րդ դարի պատմիչ Իբն Խալլիքանն իր «Անհետացած երևելիներ» /«Վիֆայաթ ալ-այան»/ երկում արժեքավոր տվյալներ է հաղորդում հայ վեզիրների ինստիտուտի հիմնադիր Բադր Ալ-Գամալիի /1074-1094/ և նրա հետնորդների մասին[6]:

Ֆաթիմյան շրջանի Եգիպտոսի հայերին առնչվող առանձին իրողությունների մասին որոշակի, բայց և սուղ տեղեկություններ են հաղորդում նաև հայկական աղբյուրները, մասնավորապես՝ Մատթեոս Ուռհայեցին /11-12-րդ դդ./ և Կիրակոս Գանձակեցին /13-րդ դար/:

Ֆաթիմյան Եգիպտոսում հայերի հաստատվելու հիմնական պատճառներից մեկը եղել է միջինասիական քոչվոր ցեղերի ասպատակությունները Հայաստանում: Անիի ավերումը և սելջուկների հրոսակային արշավանքները պատճառ դարձան, որպեսզի Հայաստանի ողջ մնացած բնակչության զգալի մասը հեռանա հայրենիքից դեպի ապահով վայրեր: Հատկապես հարավային Հայաստանի բնակչության մի հատվածը գաղթեց Սիրիա, Եգիպտոս, Կապադովկիա, Կիլիկիա[7]: Եգիպտոս հայերի մեկ այլ հոսք գնացել է Սիրիայից Բադր Ալ-Գամալի Ալ-Արմանիի հետ՝ որպես նրա սեփական զորագնդի անդամ, երբ Ֆաթիմյան Ալ-Մուսթանսիր խալիֆան /1036-1094/ երկիրը քաղաքական և տնտեսական անկումից փրկելու նպատակով 1074թ. հարկադրված դիմում է Աքքայի /Սիրիա/ կառավարիչ Բադրի օգնությանը[8]: Առանձին տեսակետների համաձայն՝ Բադրը Եգիպտոս հասավ իր անձնական զորագնդի հետ, որ

---

[5] The Churches and Monasteries of Egypt and Some neighbouring Countries, atributed to Abu Salih the Armenian. Translated from the original arabic by B. Evetts, with added notes by Alfred J. Butler, Oxford, 1895, նաև՝ Ապուսահլ Հայ, Պատմութիւն եկեղեցեաց եւ վանօրէից Եգիպտոսի /անգլերենից թարգմանությունը՝ Ղեւոնդ Ալիշանի/, Վենետիկ Ի Սուրբ Ղազար, 1895:

[6] Իպն Խալլիքան, Վեֆաեաթ էլ Ասյան /«Անհետացած երևելիներ»/, ըստ՝ Գէորգ Մըսրլեան, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1935:

[7] Հ.Թոփուզյան, Հայ-եգիպտական կապեր, տե՛ս «Սովետական Հայաստան» ամսագիր, Եր., 1959, նոյեմբեր, թիվ 11, էջ 38:

[8] Ն.Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. I, Եր., 2003, էջ 306-307:

տարբեր տվյալներով կազմված էր 3.000, նույնիսկ 10.000 հայ զինվորներից[9]: Կարճ ժամանակում Բադրին հաջողվում է երկրի ավագանու դեմ ուղղված անողոք գործողությունների շնորհիվ վերականգնել Եգիպտոսի կայունությունը և հռչակվել էմիր ալ-ջույուշ՝ սկիզբ դնելով հայազգի վազիրների հարյուրամյա կառավարմանը: Պատմական աղբյուրները վկայում են, որ Բադրը ոչ միայն բանակը, այլև իր անձնական զորագնդերն էր համալրում հայերով: Նրա օրոք Կահիրեի հյուսիսային մասում գտնվող Հուսեյնիյե վայրը հեծյալ և հետևակ հայ զինվորների բնակվելու թաղամաս էր՝ «մի թաղամաս՝ որտեղ հավաքվում էին 7.000-ի մոտ կամ ավելի անձինք և որտեղ կային մի քանի շուկաներ»[10]: Առանձին հետազոտողներ ենթադրում են, որ նշված 7.000 զինվորների մեջ կային ոչ միայն հայեր, այլև՝ վրացիներ, չերքեզներ և կովկասյան այլ ազգությունների ներկայացուցիչներ[11]: Բացի այդ, պետք է ենթադրել, որ հայ զինվորների միայն մի մասն էր քրիստոնյա, մյուս մասն իսլամացած հայեր էին[12]: Բադրն իր բանակի քրիստոնյա զինվորների համար նույնիսկ վերանորոգեց Հուսեյնիե թաղամասում գտնվող լքված եկեղեցիներից մեկը[13]:

Փաստորեն, հայերի մի մասը Եգիպտոսում հաստատվեց ապահովություն և աշխատանք գտնելու հեռանկարով, իսկ մեկ այլ զանգված Եգիպտոս ժամանեց որպես զինվորական՝ ծառայելու հայազգի վազիրներին և արաբ խալիֆաներին: Եվ վերջապես հայերի երրորդ մասը Կիլիկիայից և այլ բնակավայրերից Եգիպտոս տարվեց որպես ռազմագերի, որոնց թիվը երբեմն հասնում էր տասնյակ հազարների: Այդ շերտերն էլ կազմեցին եգիպտահայ գաղթօջախը[14]: Ս.Զեյթլյանի համոզմամբ՝ 11-րդ դարի վերջին Եգիպտոսում հայերի թիվը հասել է 100.000-ի[15]:

Եգիպտոսում հայ համայնքի աշխուժացումն անքակտելիորեն կապված է հայազգի վազիր Բադր Ալ-Գամալիի անվան հետ, ով հայերի նկատմամբ խիստ բարյացկամ վերաբերմունք ուներ: Իր հերթին, փոքրամասնությունների

---

[9] Al-Imad Leila S., The Fatimid Vizierate, 969-1172, Berlin, 1990, p. 103.

[10] Գ.Մըսրլեան, Ականավոր հայեր Եգիպտոսի մէջ, նշվ.աշխ., էջ 28:

[11] Նույն տեղում:

[12] Իսլամացած հայ զորքը քրիստոնյա հայ զինվորների նման, գուցե և ավելի, Բադրի ամենահուսալի հենարանն է եղել, որի օգնությամբ նա սկզբում իր իշխանությունն է տարածել Սիրիայում, ապա շուրջ 20 տարի՝ Եգիպտոսում: Հետազոտողների կարծիքով՝ Բադրի զորքը կրոնափոխ է եղել կամ բռնի ուժով, կամ էլ Սիրիայում և արաբական այլ երկրներում արդեն մի քանի սերունդ ապրած լինելով:

[13] Hamblin William James, The Fatimid Army During the Early Crusades, University of Michigan, 1985, p. 21.

[14] Ն. Տէր-Միքայէլեան, Եգիպտահայ գաղութը 10-15-րդ դարերում, Պեյրութ, 1980, էջ 208:

[15] Ս.Զէյթլեան, Հայութեան ներդրումը վաղ միջնադարեան եւ արդի Եգիպտոսի պատմութեան մէջ, Կանադա, 2004, էջ 31:

նկատմամբ դրական վերաբերմունք ունեին նաև Ֆաթիմյան իշխանությունները, որոնք փոքրամասնություններին արտոնում էին եկեղեցիներ, վանքեր ու աղոթատներ կառուցել: Բադրի օրոք թե՛ դպտիների և թե՛ հայերի համար կառուցվեցին բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ[16]: Հատկանշական է, որ Բադրի կառավարման շրջանում Ֆաթիմյան եգիպտոսում պաշտոնապես հաստատվեց հայ եկեղեցին: Եգիպտոսի հայ գաղութն ուներ իր հոգևոր առաջնորդը, ով ազդեցիկ դիրքեր ուներ արքունիքում: Հավանաբար արդեն 982թ.-ից հայերը Կահիրեում ունեցել են սեփական եկեղեցի, որի ապացույցը նշված թվականին վերագրվող հայկական խաչքարի առկայությունն է[17]:

1075թ. Եգիպտոս այցելեց Ամենայն հայոց կաթողիկոս Գրիգոր Բ. Պահլավունին, որը հայտնի է նաև Վկայասեր անունով: Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Գրիգոր Վկայասերը շուրջ երեք տարի անցկացրեց եգիպտոսում, ծանոթացավ եգիպտահայ գաղութի իրավիճակին: Նրան մեծ ընդունելություն ցույց տվեց Ալ-Մուսթանսիր խալիֆան: 1076թ. կաթողիկոսին մեծարելու համար Բադր Ալ-Գամալին հայությանը նվիրեց Զուեյլա թաղամասում գտնվող Մելքիտ եկեղեցին, որ կոչվեց Ս.Աստվածածին, իսկ 1084-ին նախապես հայապատկան Դեյր Ալ-Խանդակի Սուրբ Գևորգ եկեղեցին վերադարձվեց հայերին[18]: Եգիպտոսից մեկնելուց առաջ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը Բադր Ալ-Գամալիի քաջալերանքով՝ բարեկամական կապեր հաստատեց դպտի և քրիստոնյա այլ համայնքների հետ և Եգիպտոսում եպիսկոպոս ձեռնադրեց իր քրոջ որդուն՝ Ներսես Շնորհալու հորեղբայր Գրիգորիսին: Եգիպտոսի առաջնորդի նստավայրը, ինչպես նշում է Աբու Սալիհ Ալ-Արմանին, Կահիրեի հարավում գտնվող Իբֆիհ փոքր քաղաքն էր[19]:

Գրիգոր Վկայասերի՝ Եգիպտոս այցելության վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում նաև հայ պատմիչները, մասնավորապես Մ.Ուռհայեցին և Կ.Գանձակեցին: Ուռհայեցին նշում է, որ Գրիգոր Վկայասերը որոշ ժամանակ իր հայրապետական աթոռը հաստատել է եգիպտոսում: Կաթողիկոս դառնալուց որոշ ժամանակ անց նա ուխտի է գնացել Հռոմ, իսկ այնուհետև այցելել Եգիպտոս, որի թագավորից փառահեղ ընդունելության է

---

[16] Գ. Մրսրլեան, նշվ.աշխ., էջ 29:

[17] Թ.Գուշակեան, Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները, Գահիրէ, 1927, էջ 10-11:

[18] Kapoian-Kouymjian Angele, "L'Egypt Vue Par Des Armeniens", Paris, 1988, p.2. Ըստ Աբու Սալիհ Ալ-Արմանիի՝ Սուրբ Գևորգ եկեղեցին ու վանքը կառուցել է Զոհար զորավարը, ով որոշ ենթադրությունների համաձայն՝ ծագումով հայ էր և ամենայն հավանականության՝ թաղված է նշված եկեղեցու բակում: Վերջինս 969թ. Եգիպտոսը նվաճած Ֆաթիմյան բանակի զորավարն էր և նաև՝ Եգիպտոսի նոր մայրաքաղաքի՝ Կահիրեի հիմնադիրը:

[19] Ապուսահլ Հայ, նշվ.աշխ., էջ 21:

արժանանացել «..ավելի քան հոռոմոց կայսրից»[20]: Ուռհայեցին նաև նշում է, որ Գրիգոր Վկայասերի՝ Եգիպտոս այցելած շրջանում այնտեղ շուրջ 30 հազար հայ կար: Նրա տվյալներով՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը Եգիպտոս այցելելուց որոշ ժամանակ անց իր քեռորդի տեր Գրիգորին /Գրիգորիսին/ 1084-ին կաթողիկոս է ձեռնադրում, իսկ ինքը վերադառնում Հայաստան: Հատկանշական է, որ Ուռհայեցին նշում է Եգիպտոսում հայկական կաթողիկոսական երկու աթոռների մասին՝ առաջ բերելով առեղծված[21]: Ամենայն հավանականությամբ, միջնադարում Եգիպտոսի հայ գաղութի մեծացման հետևանքով հայերը կարիք են ունեցել երկու առաջնորդի՝ մեկը Կահիրեում, մյուսը՝ Ալեքսանդրիայում կամ Վերին Եգիպտոսում[22]:

Մ.Օրմանյանը նշում է, որ թեև Եգիպտոսի տեր Գրիգորիսը հայկական աղբյուրներում հիշատակվում է որպես կաթողիկոս, սակայն նա սոսկ եպիսկոպոս էր, և կաթողիկոսի պատվանունը կրում էր, քանի որ Եգիպտոսում կար պատրիարքական աթոռ[23]:

Հատկանշական է, որ Գանձակեցին Գրիգոր Վկայասերի՝ Եգիպտոս կատարած ճամփորդության մեկ այլ պատմություն է ներկայացնում: Նա նշում է, որ Հռոմից հետո կաթողիկոսը նավ է նստում՝ Կոստանդնուպոլիս գնալու մտադրությամբ, սակայն ծովի վրա մրրիկ է բարձրանում և Վկայասերն իր սպասավորների հետ միասին հայտնվում է Եգիպտոսում[24]:

Ինչպես բուն Հայաստանում և Կիլիկիայում, Եգիպտոսում ևս հայկական վանքերն ունեցել են իրենց վանական դպրոցները[25]: Դրանցում պատրաստում էին հոգևորականներ, ովքեր ծառայում էին գաղթավայրի վանքերում, եկեղեցիներում և սրբատեղիներում[26]: Այդ շրջանում Եգիպտոսի հայկական գաղթավայրում զարգացած էր հայկական գրչագրությունը և մանրանկարչությունը: Եգիպտոսում ստեղծվել են նաև մեծաքանակ ձեռագրեր[27]:

---

[20] Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Եր., 1973, էջ 139:
[21] Նույն տեղում, էջ 152:
[22] Ս.Տեր-Միքայելյան, նշվ. աշխ., էջ 86:
[23] Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, հ.բ., Մայր աթոռ Ս.Էջմիածին, 2001, էջ 1533:
[24] Կիրակոս Գանձակեցի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Սոաքելյանի, Եր., 1982, էջ 77-78:
[25] Ս.Տեր-Միքայելյան, նշվ. աշխ., էջ 224:
[26] Նույն տեղում, էջ 225:
[27] Աբու Սալիհ Ալ-Արմանին հաղորդում է, որ 1169թ., երբ հայկական շրջանն ավարտված էր, երկրում հայերը սկսեցին ենթարկվել հալածանքների, հայկական վանքերն ու եկեղեցիները փակվում էին կամ բռնագրավվում: Ստեղծված պայմաններում Եգիպտոսի հայ առաջնորդ եպիսկոպոսը ստիպված է եղել իր նոսրացած թեմը թողնել և ապաստանել Երուսաղեմի հայ վանքում՝ իր հետ տանելով 74 եկեղեցական զանազան գրքեր և մեկ

Եգիպտոսում հաստատված հայերը սոցիալական առումով բազմաշերտ էին: Նրանց մեջ կային հողագործներ, արհեստավորներ, շինարարներ, առևտրականներ: Սոցիալական ամենաբարձր խավի ներկայացուցիչները վազիրներն էին, ովքեր հսկայական հողային տարածքներ ունեին Նեղոս գետի բարեբեր հովտում: Զգալի կալվածքներ ունեին նաև Բադր Ալ-Գամալիի հետ Եգիպտոս եկած նրա հավատարիմ զինվորները, ովքեր տիրացան սպանված ավագանու հողային տիրույթներին, շենքերին և մնացած հարստությանը[28]: Բացի այդ, Բադրն իր բանակի աստիճանավորներին քաջալերելու համար ժամանակ առ ժամանակ նրանց *իկտա* /պարգևահող/ էր տրամադրում[29]:

Կահիրեն վերաշինելու գործում և ընդհանրապես երկրի շինարարական աշխատանքում Բադր Ալ-Գամալին մեծապես օգտագործեց հայկական ներուժը: Կահիրեի քարակերտ պարիսպների ողջ շինարարությունը Բադրը հանձնեց հայ շինարարներին: Եգիպտոսում հաստատված եղեսիացի երեք հայ ճարտարապետ եղբայրներ հրավիրվեցին կառուցելու Կահիրեի երեք նշանավոր դարպասները՝ Բաբ Ալ-Ֆութուհը, Բաբ Ան-Նասրը և Բաբ Ալ-Զուեյլան, որոնք մինչ օրս կանգուն են: Հատկանշական է, որ հայ վարպետների կառուցած պարիսպներն ու դարպասները որոշակիորեն կրում են հայ ճարտարապետության ազդեցությունը: Առաջին երկու դարպասները կառուցվել են 1087-ին, երրորդը՝ 1092-ին[30]:

Եգիպտոսի Ֆաթիմյան շրջանի հայ գաղութի պատմությունը գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում՝ որպես հայ ժողովրդի պատմության մի բաղկացուցիչ: Բացի այդ, այն նաև Եգիպտոսի միջնադարյան պատմության անքակտելի մասն է և հնարավորություն է տալիս ուսումնասիրել նշված ժամանակահատվածում Եգիպտոսի հասարակական-քաղաքական կյանքում հայկական գործոնի նշանակությունը: Առկա պատմական տեղեկությունները թույլ են տալիս եզրակացնել, որ հայերը հատկապես Ֆաթիմյան Եգիպտոսում բացառիկ կարևոր դերակատարություն են ունեցել երկրի ռազմական, քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում, նպաստել Եգիպտոսի բարգավաճմանը և պետականության ամրապնդմանը:

Ավետարան, որն, ի դեպ, եղել է մանրանկարչական արվեստի մի գեղեցիկ նմուշ: Տե՛ս Ապուսահլ Հայ, նշվ.աշխ., էջ 22-23:

[28] Մանրամասն տես՝ Ն. Տեր-Միքայէլյան, նշվ.աշխ., էջ 208-210:

[29] Ս.Զէյթլեան, նշվ.աշխ., էջ 29:

[30] Ali Wijdan, The Arab Contribution to Islamic Art /from the Seventh to the Fifteenth Centuries/. American University of Cairo Press, 1999, p. 174.